ԿԱՐԾԻՔ

ՎՌԱՄ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵԱՏՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Անցումային տնտեսություն ունեցող երկրներում տնտեսական համակարգերի ձևավորման և սոցիալ-տնտեսական հարաբերությունների որակական վերափոխումների ժամանակ երկրները կանգնում են հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման հետ կապված դժվարությունների առջև: Տարածաշրջանի մասշտաբով տնտեսական գործունեության ինտեգրմանը զուգահեռ, աշխատանքի տարածաշրջանային բաժանման և մասնագիտացման գործընթացները ստանում են կարևոր նշանակություն: Սա պայմանավորված է առանձին երկրների՝ աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացներում ուրույն դեր ստանձնելու հրամայականով:

Աշխատանքի միջազգային բաժանումը սերտ կապված է նաև արտադրության կոոպերացման հետ: Արտադրության կոոպերացումը կարելի է բնութագրել որպես աշխատանքի միջազգային բաժանման վրա հիմնված գործընթաց, որը հանգեցնում է երկրների միջև առավել բարձր մրցունակություն ունեցող ապրանքների փոխանակմանը: Սակայն, համաշխարհային տնտեսության գլոբալացման և տարածաշրջայնացման արդի փուլում չարժե արտադրության կոոպերացումը դիտարկել միայն արտադրությունների բաշխման տեսանկյունից: Արտադրության մասնատումը և վերջնական արտադրանքի տարբեր մասերի արտադրության բաժանումը առանձին երկրների միջև, հանգեցնում են բարդ և «առանց սահմանների» արտադրական համակարգերի ձևավորմանը (գլոբալ արժեքային շղթաներ), որոնցում առանձին երկրները և ձեռնարկությունները միավորված են երկարաժամկետ տնտեսական աճի բարդ սցենարների մեջ:

Եվրասիական տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների զարգացումը սիներգիկ էֆեկտ ապահովելու նպատակ ունի, որը պետք է հիմնվի ինտեգրացիոն խմբավորման երկրների մրցակցային առավելությունների ավելի համակարգային օգտագործման և տարածաշրջանային արժեքային շղթաների ձևավորման վրա, ինչն էլ աշխատուժի և կապիտալի խաչաձև օգտագործման միջոցով թույլ կտա ապահովել երկարաժամկետ տնտեսական աճ:

Վերը նշվածով է պայմանավորված հետազոտության համար ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները

Ատենախոսության առաջին՝ «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման տեսական հիմնադրույթները» գլխում անդրադարձ է կատարվել աշխատանքի տարածաշրջանային բաժանման տնտեսագիտական բովանդակությանը, այդ թվում՝ մասնագիտացմանը և ինդուստրացմանը, հետզոտվել է ինտեգրացիոն խմբավորումների շրջանակներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման հնարավորությունների իրացումը, ինչպես նաև դիտարկվել է աշխատանքի տարածաշրջանային բաժանման միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացները Եվրասիական տնտեսական միության շրջանակներում» գլխում

ներկայացվել է ԵԱՏՄ երկրներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման վրա տնտեսական ինտեգրման ազդեցության մեթոդաբանական գնահատականը, վերլուծվել է ԵԱՏՄ երկրների փոխադարձ առևտուրը, ինչպես նաև հետազոտվել է արտահանման դիվերսիֆիկացման ռազմավարությունը, որպես ԵԱՏՄ երկրների մրցունակության բարձրացման գործիք:

Ատենախոսության երրորդ՝ «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հեռանկարները ԵԱՏՄ երկրներում» գլխում դիտարկվել են արտադրության արդյունավետության բարձրացման գործոնները՝ ԵԱՏՄ երկրների աշխատանքի տարածաշրջանային բաժանման համատեքստում, տնտեսամաթեմատիկական մոդելի միջոցով գնահատվել է ՀՀ արտադրական մասնագիտացումը ԵԱՏՄ շրջանակներում, ինչպես նաև ուրվագծվել են արտադրական կոոպերացման հեռանկարները ԵԱՏՄ երկրներում:

Եզրակացությունում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ աշխատանքի միջազգային բաժանման գործընթացներում առանձին երկրների մասնագիտացման՝ տնտեսագիտական գրականության մեջ առկա ցուցանիշների ընդհանրացման հիման վրա մշակվել է աշխատանքի ճյուղային տարածաշրջանային բաժանման գործակիցը, կառուցվել է ԵԱՏՄ երկրների արտահանման դիվերսիֆիկացման/մասնագիտացման և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ կախվածության ցրվածքի գծապատկերը, ինչպես նաև իրականացվել է ԵԱՏՄ երկրների արդյունաբերության ծավալների ցնցումների

վերլուծությունը, որը թույլ է տվել բացահայտել Հայաստանի և Ռուսաստանի միջև արդյունաբերական արտադրանքի արտաքին առևտրի հիմնական օրինաչափությունը:

Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն կողմնորոշվելու զարգացող երկրներում աշխատանքի տարածաշրջանային բաժանման առավել հրատապ հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում ինտեգրացիոն քաղաքականության համակարգումն ապահովող ծրագրերի իրատեսականությանը, ինտեգրացիոն քաղաքականության բարելավմանը և աշխատանքային հարաբերությունների ազդեցության գնահատմանը նվիրված ուսումնասիրությունների և գործնական մշակումների ժամանակ:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ,*** որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

1. Աշխատանքի առաջին նորույթը խիստ պայմանական է և խոցելի, քանի որ երկրների խմբերի դասակարգումն այս կամ այն չափանիշով կամ չափանիշներով, ըստ էության, ընդամենը հնարավորություն է տալիս կոնկրետ տնտեսական երևույթը դիտարկել այլ տեսակետից, սակայն երևույթի տնտեսական արդյունավետության գնահատման իմաստով այն որևէ շոշափելի արդյունք չի ապահովում:

   Կարծում ենք, որ կարելի էր առաջին գիտական նորույթի փոխարեն ձևակերպել նորույթ արտադրական կոոպերացման մասով՝ հայաստանյան իրողությունները հաշվի առնելով:

2. Ատենախոսության 1.3. ենթագլխում հեղինակը բավականին մանրամասն և համակարգված ներկայացնում է աշխատանքի տարածաշրջանային բաժան-

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա, այլ հետապնդում են Հայաստանի Հանրապետությունում տարածաշրջանային քաղաքականության նպատակայնության բարձրացման, զարգացող երկրներում տարածաշրջանային ինտեգրմանը վերաբերող արդիական խնդիրների լուծմանը և բնակչության բարեկեցությանն ուղղված քաղաքականությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Վռամ Վլադիմիրի Կարապետյանի թեկնածուական ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության ինտեգրացիոն քաղաքականության կատարելագործման, մասնավորապես՝ համաշխարհային տնտեսության զարգացման շրջանակներում ինտեգրացիոն քաղաքականության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մոտեցումների ներդրման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, «Աշխատանքի տարածաշրջանային բաժանման հիմնախնդիրները ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ նրա հեղինակն

արժանի է Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՊԱՐՈՆ Դ.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

31.10.2022.